




ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. Գ. ԱՅՐԱՀԱՄՅԱՆ

ՀԵՐՄԵՍԻ ՓԻԼՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

§ 1



ին հայկական մշակույթի ամենափայլուն շրջաններից մեկը, ինչպես հայտնի է, Ն—է դարերն են հանդիսացել: Այդ ժամանակաշրջանում են հանդես եկել հայ մատենագրության ամենակարկառուն դեմքերը՝ պատմահայր Մովսես Խորենացին, եռամեծ փիլիսոփա Դավիթ Անհաղթը, ակառավոր մաթեմատիկոս Անանիա Շիրակունին, «Եղծ աղանդոց»-ի նշանավոր հեղինակ Եղնիկ Կողբացին և տասնյակ այլ պատմիչներ և գիտնականներ: Ժամանակի արեւելյան աչքի ընկնող համալսարաններում՝ Ալեքսանդրիայում, Բյուզանդիոնում, Կեսարիայում, Անտիոքում և այլուր սովորող հայ երիտասարդները վերադառնալով Հայրենիք, հրակայական գործ են կատարել գիտության և գրականության զարգացման ուղղությամբ: Ինքնագիր մեծաքանակ աշխատությունների կողքին նրանք թարգմանել են հունական և վաղ քրիստոնեական ականավոր բազմաթիվ հեղինակների՝ Արիստոտելի, Պորփյուրի, Թեոնի, Դիոնիսիոս Թրակացու, Հովհանն Ոսկեբերանի, Գրիգոր Նյուսացու և այլ հեղինակների երկերը, որոնք թանկարժեք սկզբնաղբյուրներ են գիտության և գրականության պատմության համար:¹

Հայաստանը Ն—է դարերում, փաստորեն, անտիկ գիտության և գրականության հովանավորող երկրներից մեկն է հանդիսացել. այն ժամանակ, երբ Բյուզանդիոնի

պաշտոնական շրջաններում թշնամաբար են տրամադրված եղել դեպի անտիկ գիտության ներկայացուցիչները, երբ Բյուզանդիոնի համալսարաններում արգելվել է անգամ խոսել անտիկ գիտության և գրականության փայլուն ստեղծագործությունների մասին, Հայաստանում ազատ թարգմանվել են նրանք և մեկնարանվել:

Հին հայկական թարգմանական մատենագրության մեջ բացառիկ արժեք ունեն հատկապես այն աշխատությունները, որոնց հունական, լատինական կամ անտիկանրնագրերը չեն հասել մեզ, և գիտության մեջ հայտնի են միայն հին հայկական թարգմանություններով: Այդ կարգի աշխատություններից կարելի է մատնացույց անել օրինակ՝ Իրենիոսի «Ցույց՝ առաքելական Բարոգուրեան»-ը, Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոն»-ը, Զենոնի «Յաղագս բնութեան» տեքստը, Թեոնի, Փիլոնի և մի շարք այլ հեղինակների ամբողջական աշխատությունները:

Հերմեսի «Սահման»-ը ևս պատկանում է հին հայկական այն թարգմանությունների շարքին, որոնց հունարեն բնագիրը մեզ չի հասել և հայտնի են միայն հայերեն թարգմանությամբ:

§ 2

Հերմեսը, ինչպես ապացույց են հունական մատենագրությամբ զբաղվող բանասերները, պատմական անձնավորություն չէ. նա մտացածին հեղինակն է թեոսոֆիկ մի ուսմունքի, որն ստեղծվել է եգիպտահունական միջավայրում, մեր թվարկությունից շատ առաջ:

¹ Н. Адоиц, «Армения в эпоху Юстиниана», СПб, 1908 г., стр. 208.

Այդ ուսմունքի հնագույն շերտը հյուսվել է եգիպտական Թոթ կամ Թաթ աստծու շուրջը, որը համարվում էր իմաստության, դրաբության աստված։ «Մշակույթի հովանավորողը և պահպանը, դպրության, ծիսակատարության և ամեն տեսակ իմացության ու պետականության հայտնագործողը»²։ Նա պատկերվում էր մարդու ձևով, բայց Իբիսի գլխով, և որովհետև վերջինս ուներ երկար կտուց, այդ պատճառով էլ եգիպտացիները, որոնք սիրում էին պատկերավոր արտահայտվել, նրան անվանում էին «Քթավոր»։

Թոթ աստվածն իր պաշտոնով և դերով ճշտվ համապատասխանում է հին հայկական Տիր աստծուն, որը հանդիսանում էր դպրության, արվեստի և գիտության աստվածը³։ Ի դեպ, ժողովրդի հիշողության մեջ Տիր աստվածը պահվել է «Գրող» անունով, զոր անելու իմաստով։ Նրան վերագրվել է մի պաշտոն, որով նա պարտականություն ուներ նորածիններին մուտք անել ծննդյան մատյանում, իսկ մահացածներին դուրս գրել մատյանից և առաջնորդել դեպի երկինք, դեպի հանդերձյալ կյանք։ Այդ տեղից էլ առաջացել են «Գրողը քեզ տանի», «Գրողը քեզ չիքի դափտարում գրի» արտահայտությունները։

Թոթը երկար ժամանակ համարվել է դադանի և կախարդական մի շարք գրքերի հեղինակ, որոնց պարունակած «հայտնություններ»-ը միայն քրմական դասին էին վերապահված։ Կատարում, եգիպտական թոթական այդ գրքերն ընդգրկում էին իմացության տարբեր ասպարեզները՝ տիեզերագիտությունից մինչև բժշկություն։

Հետագայում, երբ եգիպտական հավատալիքները մուտք գործեցին հունական մշակույթի շրջանակները, Թոթի շուրջը հյուսված այս դպրությունը ևս անցավ հույներին և վերապրեց ուշ շրջանի փոփոխականի մեջ։ Բայց քանի որ հունական աստվածների պանթեոնում Թոթ աստծու գերակատարը Հերմես աստվածն էր և հույները Թոթին ճանաչում էին Հերմես անունով, ուստի և Թոթին վերագրված այս դպրությունը ճանաչվեց Հերմեսի սեփականություն և կոչվեց նրա անունով։

Վերցնելով եգիպտական այս «իմաստություն»-ը, հույները թարգմանեցին և հիմնավորապես մշակեցին այն՝ նրա մեջ մուծելով ինչպես տեղական, այնպես և արեւելյան շատ տարրեր։ Վերամշակված, վերափոխված այդ Հերմեսյան ուսմունքը լայն

տարածում ունեցավ ինչպես բուն Հունաստանում, այնպես և նրանից դուրս՝ արևելյան մի շարք երկրներում։

Ժամանակի ընթացքում Հերմեսի նկատմամբ եղած պատկերացումը փոխվեց. նրա վրա սկսեցին նայել ոչ թե որպես աստծու կամ աստվածների դպրի, այլ իմաստուն մի մարդու, որին ծանոթ են աստվածային «հայտնությունները» և որը պարտք ունի այդ ամենին իր որդիներին՝ Թոթի, Ասկլեպիոսի և Ամմոնի միջոցով հայտնելու իմաստության ծարավ մարդկությանը։

Երբ է վերջնականապես ձևավորվել Հերմեսյան այս ուսմունքը, — դժվար է ժամանակագրական ճիշտ շրջանակ դնել։ Հայտնի է, միայն, որ Թոթի մի տիեզերածնությունը (կոսմոգոնիան) գոյություն է ունեցել դեռևս Փիլոն Երբայեցու ժամանակ (մեր թվագրության առաջին դարում)։ Պապիրոս Օբսերվանսի 1398-ի տեքստում (Փիլոնի ժամանակից), որը հանդիսանում է Մենիքերեսի գրքի եգիպտերենից հունարենի կատարված թարգմանությունը, հիշվում է, որ նրա հեղինակը խմբագրել է Թոթին վերագրվող տիեզերածնության մի աշխատության տեքստ⁴։ Կղեմես Ալեքսանդրացին, որն ապրել է մեր թվագրության երկրորդ դարի վերջերում և երրորդ դարի սկիզբներում, հայտնում է, որ իր ժամանակ Հերմեսյան այն գրականությունը, որը պարունակել է եգիպտոսի ողջ իմաստությունը աստվածային օրհնությունից մինչև բժշկություն, կաղալել է 42 տվար հատոր⁵։ Մական նա այս ամենը Հերմեսի անունով չի հիշում, այլ Թոթի։ Կղեմես Ալեքսանդրացուց հետո արդեն կախատիոսը, որն ապրել է երրորդ դարի կեսերում, ոչ միայն ծանոթ է երևում Հերմեսյան գրականությանը, այլև բազմաթիվ մեջբերումներ է անում նրանից։ Ավելի ուշ շրջանի մասնադիրներն արդեն ծանոթ են Հերմեսին վերագրված այս գրականությանը և Հերմեսին հիշում են «մեծագույն», «եռամեծ» մակդիրներով⁶։ Միջին դարերում վերջին «եռամեծ» մակդիրը վերջնականապես հաստատվում է Հերմեսի անվան վրա և այդ անունով էլ ճանաչվում գիտության մեջ։

Հերմեսի աշխատությունն առաջին անգամ

⁴ Տե՛ս «Corpus Hermeticum»-ի Փարիզի 1945 թվականի հրատարակության առաջաբանը, էջ 17։

⁵ Clem. Alex., «Stromatum», bib. IV., p. IV.

⁶ W. Christ, «Geschichte der griechische Literatur», München, 1898, էջ 836.

² Б. А. Гурьев, «История древнего Востока», Т. 1, Ленинград, стр. 177.

³ Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, «Պատմության հայաց», Տփլիս, 1909 թ. էջ 404։

ված թարգմանության հետ միասին, հրատարակել է Անդրեաս Տուրնիքտան 1554 թվականին: Այնուհետև եղել են Հերմեսի տեքստերի բազմաթիվ հրատարակություններ, որոնց վրա շենք ուղղում կանգ առնել:

Հերմեսի տեքստերի արևմտյան եվրոպական լեզուներով հրատարակված թարգմանություններից ուշագրության արժանի են գերմանական թարգմանությունները՝ 1781 թվականին կատարել է Ֆրեմմանը, իսկ 1926 թվականին՝ Բրաունինգերը, անգլերեն թարգմանությունը, որը կատարել է Վ. Սկոտը և հրատարակել Օքսֆորդում 1924 թվականին և ֆրանսերեն թարգմանությունը, որը կատարել է Լուիզ Մանարդը և որի երկրորդ հրատարակությունը լույս է տեսել Փարիզում 1867 թվականին:

Հերմեսի աշխատությունների վերջին, լրիվ և լավագույն հրատարակությունը Փարիզի 1945 թվականի հրատարակությունն է՝ Ա. Գ. Նույի և Ա. Ժ. Ֆեստյուների աշխատակցությամբ: Վերջին հրատարակությունը բազմազան է երկու հատորից և ունի «Corpus Hermeticum» վերնագիրը:

§ 3

Հերմեսի հայերեն թարգմանության տեքստը մինչև վերջերս հայտնի է եղել միայն հայագետների նեղ շրջանում: Հերմեսի թարգմանական այդ աշխատության մասին տպագիր գրականության մեջ առաջին անգամ խոսել է Հ. Տաշյանը իր կազմած Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի ձեռագրաց ցուցակում: Նկարագրելով Վիեննայի Մատենադարանի № 217 ձեռագրի պարունակած նյութերի բովանդակությունը, որ ընդօրինակված է նաև Հերմեսի նշված աշխատությունը, Հ. Տաշյանը խոստանում է ընթերցողներին, որ՝ «Այս շատ մասամբ հետաքրքրական ճառիս մասին» առանձին պիտի խոսի⁷, սակայն հետագա տարիներին, որքան մեղ հայտնի է, նա ոչ անդրադարձել է և ո՛չ էլ որևէ բան գրել նրա մասին: Հերմեսի այս թարգմանության վրա կանգ ենք առել նաև մենք 1944 թվականին մեր «Երթակացու մատենագրության» մեջ և այն կարծիքը հայտնել, որ այդ աշխատությունը ինչպես և ստոյիկյան Զենոնին վերագրված տեքստը, հունարան դարոցի հնագույն թարգմանություններից են և արժանի են հատուկ ուշադրություն⁸:

7. Հ. Տաշյան, «Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», Վիեննա, 1935 թ., էջ 369 և 552:

8. Նույն տեղում, էջ 552:

9 Ա. Գ. Արքայազմյան, «Երթակացու մատենագրություն», Երևան, 1944 թ., էջ 26:

Հերմեսի այս տեքստի թարգմանություն մասին խոսել է նաև պատմական գիտությունների թեկնածու Լ. Խաչիկյանն իր թեկնածուական դիսերտացիայում, որը նվիրված է «Եղիշեի արարածոց գրքի մեկնությանը»¹⁰: Նա Հերմեսի այս աշխատությանն անդրադարձել է Եղիշեի օգտագործման սկզբնաղբյուրների պարզաբանման կապակցությամբ:

1955 թվականին Հերմեսի «Մահմանք»-ի համեմատական տեքստը և ուսումնասիրությունը առաջարկեցին հրատարակել Հայկական ՍՍՏ Պետական մատենադարանի գրեկցիային: Վերջինս սիրահոժար համաձայնեց, սակայն հետագայում պարզվեց, որ ակադեմիկոս Հ. Մանանդյանն ևս մշտկած, պատրաստած է եղել Հերմեսի «Մահմանք»-ը: Մենք, ելնելով գիտական էտիկայից, հետ վերցրինք մեր ուսումնասիրությունը՝ հրատարակության առաջնությունը դիչելով հանգուցյալ ակադեմիկոսին:

Անցյալ տարի Հայկական ՍՍՏ Պետական մատենադարանի «Բանրեր»-ի մեջ լույս տեսավ Մանանդյանի ուսումնասիրությունը և կազմած տեքստը¹¹: Մենք այժմ իրավասու ենք համարում մեղ հրատարակության հանձնել Հերմեսին նվիրված մեր ուսումնասիրությունը: Մեր աշխատանքները չեն խանգարում իրար, քանի որ նրանք զգալի չափով տարբերվում են տեքստի վերծանման, նրա գնահատման և թարգմանության մի շարք հարցերում: (Ակադ. Հ. Մանանդյանի կազմած տեքստը «Բանրեր»-ի նույն համարում թարգմանել է փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ս. Արեշտյանը):

§ 4

Հերմեսի հայերեն թարգմանությունը մեղ հասել է ոչ թե յոթ ձեռագիր ընդօրինակություններով, ինչպես ենթադրել է ակադ. Հ. Մանանդյանը, այլ՝ 11, որոնցից 9 Հայկական ՍՍՏ Պետական մատենադարանի սեփականությունն են կազմում այժմ, իսկ երկուսը՝ Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի: Հերմեսի նշված աշխատության ընդօրինակություններից, հավանական է, լինեն նաև Երուսաղեմի Ս. Հակոբյանց և Վենետիկի Մխիթարյանների մատենադարաններում, սակայն ձեռքի տակ չունենալով այս մատենադարանների ձեռագրերի լրիվ ցուցակները, զմարանում ենք կոնկրետ որևէ բան ասել:

10 Պատմական գիտությունների թեկնածու Լ. Խաչիկյանի այս ուսումնասիրությունը գեղ չի հրատարակված:

11 «Բանրեր Մատենադարանի», № 3, Երևան, 1956 թ., էջ 298—313:

Հերմեսի այս աշխատության ուսումնասիրողների գործը հետաքալում դուրսացնելու համար, անհրաժեշտ ենք համարում ստորև տալ նշված աշխատությունը պարունակող ձեռագրերի համառոտ նկարագրությունը:

Ա) Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 419 (449): Սկիզբը՝ թ. 99թ. «Հերմայ եռամեծի առ Ասկիպիոս. Սահմանք:— Աստուած՝ իմանալի աշխարհ...»: Վերջը՝ թ. 102թ. «...ինքն ըստ ինքեան տրտմի, ըստ ինքեան ելով յիմանալի աշխարհի, իսկ մնալ սէր գոյացութիւն»: Ձեռագիրն ընդօրինակված է 1777 թվականին Գրիգոր Գրիկ կողմից երկսյուն նոտր գրով: Ձեռագրի վերջում ընդօրինակված Հակոբ Բանասերի մի հիշատակությունից երկվում է, որ ներկա ձեռագրի նախամայր օրինակը եղել է փրիստփայական նյութերի ժողովածու, որի մեջ ընդօրինակված է եղել նաև Դավիթ Անհաղթի մեկնություններից մեկը:

Բ) Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2269 (2285): Սկիզբը՝ թ. 87ա. «Հերմեայ եռամեծի առ Ասկիպիայ. Սահմանք:— Աստուած՝ իմանալի աշխարհ...»: Վերջը՝ թ. 88ա «...որպէս ելանելոյ գլորովայնէ գորովայնիսն ոյինչ իրշես, յայպէս և ի մարմնոյ ելանելովն ոյինչ յիշեսցես զնորայնս»: Ձեռագիրը տոմարական և քերականական նյութերի ժողովածու է, գրված է երկսյուն նոտր գրով: Չունի հիշատակարան: Գրչությունը ԺԷ դարի է:

Գ) Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 3197 (390): Սկիզբը՝ թ. 185թ. «Սահմանք Հերմիստ:— Աստուած՝ իմանալի աշխարհ...»: Վերջը՝ թ. 198ա. «...բազում հօանե[ալ] Ե.երորդ աստվածն էիցս, զոր արփի ասէ շրջապատող»: Ձեռագիրը քերականական նյութերի ժողովածու է, գրված է միասյուն բոլորգրով: Հիշատակարան չունի: Գրչության ժամանակը՝ ԺԶ դար: Ունի հիշատակագրություն 1739 թվականից:

Դ) Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 538 (414): Սկիզբը՝ թ. 113ա. «Սահմանք Հերմիստ:— Աստուած՝ իմանալի աշխարհ...»: Վերջը՝ թ. 123ա. «...բազումք հօանե[ալ] Ե.երորդ աստվածն էիցս, զոր արփի ասէր շրջապատող»: Նախորդ ձեռագրի տառացի ընդօրինակությունն է: Ձեռագիրը գրված է 1595 թվականից առաջ: Գրիչը և գրչության վայրը անհայտ են: Գիրք մանր բոլորգրի է, գրությունը՝ միասյուն:

Ե) Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2303 (2327): Սկիզբը՝ թ. 280ա. «Հերմիսի իմաստասիրի ասա-

ցեալ:— Աստուած՝ իմանալի աշխարհ...»: Վերջը՝ թ. 284թ. «...մահ իմացեալ անմահութիւն է, ոչ իմացեալ մահ: Մահականացուն ոնդ անմահին...»: Այստեղ թերթն ընկել է և ընդհատվում է տեքստը: Ձեռագիրը՝ փրիկ-ստփայական, տոմարական և քերականական նյութերի ժողովածու է, ընդօրինակված է 1652 թվականին Մարկոս սարկավագի ձեռքով: Գրված է բոլորգրով:

Զ) Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 1157 (1149): Սկիզբը՝ թ. 198թ. «Հերմիսի իմաստասիրի ասացեալ:— Աստուած իմանալի աշխարհ...»: Վերջը՝ «...ջուր՝ ցուրտ և խոնաւ, յօդ՝ խոնաւ և ջերմ, հուր՝ ջերմ և ցամաք»: Ձեռագիրն ընդօրինակված է Հովհաննես քահանայի կողմից 1708 թվականին Ագուլիսում, միասյուն նոտր գրով:

Է) Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 1838 (1905): Սկիզբը՝ թ. 271ա. «Հերմեսի եռամեծի իմաստասիրի:— Ամենայն ինչ քեզ տուեալ է...»: Վերջը՝ թ. 271ա. «...Ձի՛նչ լաւ, որ բաղդատութիւն ոչ ունի» (ծաղկաբաղ հատվածներ մեկ էջի վրա): Ձեռագիրը գիտական-մեկնողական նյութերի ժողովածու է, ընդօրինակել են Միքայիլ վարդապետը և Գևորգ Տեր-Մատթեոսյանը 1734 թվականին Ագուլիսում:

Ը) Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի ձեռագիր № 99: Սկիզբը՝ թ. 51ա. «Հերմեսի իմաստասիրի ասացեալ:— Աստուած՝ իմանալի աշխարհ...»: Վերջը՝ թ. 55թ. «...Աղ խոնաւ և ջերմ, հուր՝ ջերմ և ցամաք»: Ընդօրինակված է ԺԹ դարում (տե՛ս ն. Տաշյանի Ձեռագրաց ցուցակը, էջ 369—370):

Թ) Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի ձեռագիր № 217: Սկիզբը՝ թ. 208թ. «Հերմեսի իմաստասիրի ասացեալ:— Աստուած՝ իմանալի աշխարհ...»: Վերջը՝ թ. 210ա. «...աղ խոնաւ ջերմ, հուր՝ ջերմ և ցամաք»: Ընդօրինակված է 1848 թվականին: Ձեռագրի նախագաղափար օրինակը գրված է եղել 1280—1286 թվականներին (տե՛ս ն. Տաշյանի Ձեռագրաց ցուցակը, էջ 552):

Ժ) Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 9427 (նախկինում՝ ակադ. 2. Մանանդյանի սեփականությունը): Սկիզբը՝ թ. 210թ. «Հերմե եռամեծի առ Ասկիպիոս. Սահմանք:— Աստուած իմանալի աշխարհ...»: Վերջը՝ թ. 216թ. «...ըստ ինքեան ելով յիմանալի աշխարհի սկզբնասէր գոյացութիւն»: Գրչությունը, ըստ հնագրական տվյալների, ԺԷ դարի կեսը կարելի է համարել:

ԺԱ) Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 1500: Սկիզբը՝ թ. 1124ա. «Հերմեսի իմաստասիրի ասացեալ:—

Աստուած իմանալի աշխարհ...»։ Վերը՝ թ. 1125բ. «...ցուր՝ ցուրտ և խոնաւ, օդ՝ խոնաւ և ջերմ, հուր՝ ջերմ և ցամաք»։ Զեռագիրը Մխիթար Այրիվանեցու 1282 թվականին ընդօրինակած ձառնարանին է։

§ 5

Հերմեսի վերև հիշված ձեռագրերը, ըստ գրչական տարբերակների, կարելի է դասավորել երեք հիմնական խմբի մեջ հետևյալ կարգով.

Առաջին խմբին պատկանում են Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 419, № 2269 և № 9427 ընդօրինակությունները։ Այս ձեռագրերի տեքստերը, մյուսների համեմատությամբ, ամենից ընտիրն են, նախամայր օրինակին ամենից մոտիկ կանգնածը։ Այդ ի նկատի ունենալով է, որ մեր հրատարակած տեքստի ընագիրը կազմել ենք այդ ընդօրինակություններից։ Այս ձեռագրերից առաջինը անհամեմատ ավելի հարազատորեն է պահել մայր ձեռագրի արխայիկ ձևերը։ Երկրորդ և երրորդ ձեռագրերի շեղումներն առաջինից գլխավորապես գրչական են։ Երկրորդի և երրորդի կապը նախագաղափար օրինակի հետ անմիջական չէ. նրանց միջև գոյություն է ունեցել միջանկյալ մի այլ օղակ ևս։

Երկրորդ խմբի ձեռագրերն են Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 3197 և № 537 ընդօրինակությունները։ Այս խումբը, համեմատաբար, ավելի մոտիկ է կանգնած առաջին խմբին, թեպետ այստեղ նկատելի է քրիստոնյա մի խմբագրի գործուն միջամտությունը։ Այս խմբի երկու ձեռագրերի տարբերակները տառ առ տառ համապատասխանում են իրար. մեկի կախումը մյուսից անմիջական է։ Մենք ենթադրում ենք, որ № 538 ձեռագրի ընդօրինակությունը արտագրված է № 3197-ից։

Երրորդ խմբին պատկանում են մյուս հինգ ընդօրինակությունները՝ Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 1500, № 2303 և № 1157 և Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի № 99 և № 217 ընդօրինակությունները։ Այս ձեռագրերի նախագաղափար օրինակը, ինչպես երևում է, հանդիսացել է Մխիթար Այրիվանեցու 1280—1286 թվականների ընդօրինակությունը։ Նախագաղափար այդ օրինակից անմիջապես սկիզբ են առնում Վիեննայի Մխիթարյանների № 99 և № 217 ձեռագրերի ընդօրինակությունները, իսկ հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 2703 և № 1157 ձեռագրերը սկիզբ են առել նույն խմբի մի այլ նախամայրից, որը, ժամանակին, գտնվել է Ագուլիսում։

Ինչ վերաբերում է Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 1838 ձեռագրի ընդօրինակությանը, ապա այս ծաղկաբաղ է Հերմեսի ընդարձակ տեքստից և, հավանական է, առաջացել է Ագուլիսի այն նախագաղափար օրինակից, որից ընդօրինակվել են վերև հիշված Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 2303 և № 1157 ձեռագրերը։

§ 6

Առաջին հիմնական հարցը, որ անհրաժեշտ է պարզել Հերմեսի «Սահմանք»-ի հրատարակության կապակցությամբ, այդ նրա հարազատության հարցն է, առանձնապես այն հարցը, թե այդ աշխատությունն իրոք պատկանում է եգիպտական հողի վրա ստեղծված Թոթյան այն գրականությանը, որը հետագայում վերագրվում է Հերմեսին, թե ոչ։ Այդ հարցը պարզելու նպատակով մենք այստեղ անհրաժեշտ ենք համարում Հերմեսի անունով հայտնի և հրատարակված հունարեն տեքստերից բերել փիլիսոփայական բնույթի մի քանի հատվածներ և համեմատել նրանք հայկական տեքստի համապատասխան հատվածների հետ՝ տեսնելու մտքի և տեսակետի այն ընդհանրությունը, որը գոյություն ունի հունական և հայկական տեքստերի միջև։

Հունական տեքստում Հերմեսը հանդես է գալիս որպես երկրային և երկնային բոլոր արարածների ստեղծողը և կառավարողը.

«Ահիզը բոլոր արարածների աստված է՝ և՛ իմացքի, և՛ բնության, և՛ նյութի, քանի որ նա իմացք է բոլոր բաների բացահայտման համար. նա հանդիսանում է բնություն, էներգիա, անհրաժեշտություն, վախճան և վերանորոգում»։

Այս պարբերության իմաստը հայկական բնագրում արտահայտված է հետևյալ լատինական ձևակերպությամբ. «Աստուած է ամենայն ինչ, և ոչ մի ինչ ոչ առանց աստուծոյ»։

Հունական տեքստում իմացք աստվածը ստեղծելով աշխարհը, նրան տվել է հավերժականություն, ուստի և աշխարհի վրա գտնված գոյացություններից ոչինչ չի փչանում։ Եվ աշխարհի հավերժականության այդ հատկությունն է, որ նրան դարձնում է երկրորդ աստված՝ իմացք աստծուց հետո.

«Արդ ոչինչ այն բաներից, որ գոյություն ունեն աշխարհի վրա, չի փչանում. երկիրը մի երկրորդ աստված է և մի անմահ գոյություն»։

Այս պարբերության իմաստը հայկական տեքստում հետևյալ ձևակերպություններն ունի. «Աշխարհ՝ զգալի աստուած», «Աս-

ստանալիս մարմինեմ անցս գեացից զգայութեանց ոչ ունին»:

Հունական տեքստում աշխարհի վրա գտնվող բոլոր արարածները այդ թվում և մարդը՝ բանական անասունը, աշխարհի անբաժանելի մասերն են կազմում:

«Ամեն ինչ, որ գոյություն ունի աշխարհի վրա, աշխարհի մասն է, մասնավորապես մարդը՝ բանական անասունը»:

Հայկական տեքստում այդ միտքն ասված է հետևյալ ձևով. «Աստուած յիեմեան է, աշխարհն աստուածում է, մարդն աշխարհի»: Հայկական տեքստում ևս մարդն անվանված է «բանաւոր կենդանի»:

Աշխարհի վրա գտնվող բոլոր անասուններն ունեն ասյն բոլոր հատկությունները, որոնք հատուկ են աշխարհին՝ նյութականություն, քանակ, որակ և այլն, սակայն մարդն է աշխարհում միայն, որ ունի բանականություն: Ըստ որում, այդ բանականությունը նա ստացել է ո՛չ թե Երկիր աստծուց, այլ անմիջապես բանական աստծուց. այդ նկատառումով է, որ մարդը և՛ մահկանացու է, և՛ անմահ:

«... Երկրի վրա գտնված բոլոր կենդանիների մեջ մարդը երկակի բնույթ ունի—մահկանացու մարմնով և անմահ բանականությամբ: Թեպետև նա անմահ է և իշխանություն ունի ողջ երկրի վրա, սակայն նա կրում է նրա պայմանը, ինչպիսի և ենթակա է ձախտագրին»:

Այս միտքը հայկական տեքստի մեջ տրամադյալված է հետևյալ ձևով. «Մարդ զերկսին բնութիւնս ունի՝ զմահկանացուս և զանմահն»: Կամ մի այլ տեղ՝ «Մարդ է մահկանացու՝ կենդանի միշտ յինելով»:

Աշխարհի վրա գտնվող բոլոր արարածների մեջ միայն մարդն է, այդ բանական կենդանին, որ կյանքում և հոգուց բացի ունի բանականություն: Ըստ որում, բանականությունը նա ստացել է ո՛չ թե Աշխարհ աստծուց, այլ իմացք աստծուց, մարդն անմիջապես հաղորդակցության մեջ է աստվածների հետ:

«Երբորդ ապրող կենդանին՝ մարդն է, որը շինված է Արեդակի պատկերով, և ի տարբերություն երկրային մյուս կենդանիների, հոր կամքով, ունի իմացականություն: Եվ ո՛չ միայն կապված է երկրորդ աստծու, այսինքն՝ Երկիր-աստծու հետ սիրո մի կապով, այլև իմացականություն է ստանում առաջին աստծուց: Այս վերջինս, արդարև, նրա ըմբռնումն է զգայականությամբ՝ իբրև անմահի և բարի բանականությամբ...»:

Այս հաստատվածի իմաստը հայերեն թարգմանության մեջ արտահայտված է հետևյալ

ձևով. «Բան մտաւոր աստծու պարզ է... ոչ ոք զերկինս տեսանէ և որ ի նա, բայց միայն մարդ. միտս և բան միայն ունի մարդն»:

Հերմեսի հոծաբեմ տեքստում փորձ է արվում բացահայտել բանականության և խոսքի փոխհարաբերությունը և այն բացատրություն է տրվում, որ մեկը մյուսի գործիքն է, առանց մեկի՝ մյուսը լինել չի կարող:

«Բանականությունը խոսքի քույրն է կամ ավելի շուտ, մեկը մյուսի գործիքն է, որովհետև ոչ խոսքը կարող է արտահայտվել առանց իմացականության, ոչ էլ իմացականությունը կարող է արտահայտվել առանց խոսքի»:

Այս պարբերության իմաստը հայկական բնագրում արտահայտված է հետևյալ կերպ. «Բան մտաց արբանեակ է, գի գոր կամին միտին, զայն և բանն քարզմանէ»:

Ըստ Հերմեսի հոծական տեքստի, մարդու մոտ աստծուց ստացած բանականություն է, որ պատճառ է հանդիսանում մարդկային բոլոր տեսակի ըմբռնումների առաջացման, ուստի և բանականությունը աստվածային բնածին սերմ է, իսկ ըմբռնումները՝ ստացական են: Հունական բնագրում ասված է.

«Իմացությունը ծնունդ է տալիս բոլոր ըմբռնումներին իբր աստծուց ընդունած սերմեր, հակառակ ըմբռնումները՝ ստացական են ներսից»:

Հերմեսի այդ հայացքը հայերեն թարգմանության մեջ ձևակերպված է ընդհանուր ձևով. «Ձի է ինչ, որ յինի մարմին մարդոյն, և է ինչ, որ գան առ մարդն: Կամ մի այլ տեղ ասվում է «Անձն առ հարկի մտանէ մարմին, բայց միտ՝ ըստ բնութեան մտանէ յանձն»:

Ըստ Հերմեսին վերագրված փիլիսոփայության, աշխարհի վրա գոյություն ունեցող բոլոր զգացական մարմինները բաղկացած են չորս տարրերից՝ հողից, կրակից, օդից և ջրից: Հունարեն հրատարակված տեքստում ասված է.

«Բոլոր մարմինները շինված են նյութից, բայց տարբեր նյութից՝ ոմանք հողից, որիշները՝ ջրից կամ օդից կամ կրակից: Բոլոր մարմինները բաղադրվող մարմիններ են»:

Նույնը գրեթե տառացի ասված է նաև հայկական բնագրում. «Մարմին է ի քաղից որակութեանց մու գեղեցկախառն բաղկացութիւն...»: Հայկական տեքստում ևս քվարկված են վերև հիշված չորս տարրերը:

Հերմեսի հունական տեքստում բանականության, հոգու, շնչի և շարժման փոխհարաբերությունը սահմանված է հետևյալ կերպ.

«Մարդու հոգին շրջում է հետևյալ ձևով. իմացականությունը բանականության մեջ է. բանականությունը՝ հոգու, հոգին՝ շնչի և, վերջապես, շունչն անցնելով արտերիաների և արյան մեջ՝ շրջանառության մեջ է դնում կենդանուն»:

Հերմեսի այս հայացքի տառացի երկվորյակը շնք գտնում հայկական բնագրում, սակայն այստեղ իմացականությունը, բանականությունը, հոգին, շունչը թվարկված են ըստ կատարած դերի... Եւ եւն որք միտս, և անձն և շունչ ունին, և որ միայն շունչ, և եւն, որ անձն և շունչ, և եւն որ միայն կենան»:

Հերմեսի հունարեն տպագրության մեջ իմացք աստվածը ներկայացված է որպես Աշխարհ՝ աստծու բովանդակողը, իսկ վերջինս՝ մարդ-արարածի: Հունական տեքստում ասված է.

«Աստված բովանդակում է երկիրը, երկիրը բովանդակում է մարդուն, երկիրն աստծու որդին է, երկիր-աստծու, այսպես ասած՝ թողը»:

Այս տեսակետը հայկական բնագրում արտահայտված է հետևյալ կերպ. «Աստուած յիւնէհան է, աշխարհ աստուածում է, մարդն յաշխարհի»:

Հերմեսի հունարեն բնագրում ամեն մի կենդանի արարած, որ իմացություն ունի, անմահ է, որովհետեւ նա հաղորդակցության մեջ է գտնվում անմիջապես իմացք աստծու հետ: Այնտեղ մենք կարդում ենք.

«Ուրեմն, ամեն մի կենդանի իմացությանը անմահ է, իսկ մարդն ամենից անմահն է, որովհետեւ մտերիմ է աստծուն և կարող է հաղորդակցության մեջ մտնել նրա հետ»:

Հայկական բնագրում այդ միտքն արտահայտված է հետևյալ կերպ. «Ապա անձն ուրեմն է գոյացութիւն անմահ, մշտնջենաւոր, իմացական իմացուած ունելով»:

Ինչպես հայտնի է, Հերմեսին վերագրվող փիլիսոփայության հիմնական դրույթներից

մեկը հոգեփոխության (մետամորֆոզի) գաղափարն է. հոգին, ըստ այդ փիլիսոփայության, անվերջ շրջման մեջ է գտնվում. նա կարող է գտնվել սողունների մեջ, թռչունների մեջ, անասունների մեջ և այլն: Հոգին մարդու մեջ գտնված ժամանակ որոշ փորձարկության է ենթարկվում. եթե մարդը կյանքում առաքինի է, ապա մահանալուց հետո նրա հոգին կարող է վերադառնալ հոգիների աշխարհը և միանալ կիսաստվածների հետ, իսկ եթե մարդը աշխարհում անբարոյական կյանք է վարում, ապա նրա մահանալուց հետո, հոգին կարող է մտնել անասունի, թռչունի մեջ և այլն: Ամենից մեկստամած մարդկանց տեղը սահմանված է սողունների մեջ: Ըստ որում, մարմնից դուրս եկող հոգին մոռացկոտ է, նա այլևս ոչինչ չի հիշում աշխարհային այն ամբողջ կյանքից, որը նա անց է կացրել մարմնի մեջ եղած ժամանակ:

Հայկական բնագրում այս մասին հետևյալն է ասված: «Ուրպէս յորովայնէ ելեր, այսպէս և ի մարմնոյ ելցես... որպէս յորովայնի ոչ գիտէիր զաշխարհիցս, այսպէս և արտաւոյ մարմնոյ էլեալ ոչ ծանիցես զարտաւոյ մարմնոյ էալս»:

Հերմեսին վերագրված փիլիսոփայական կարևոր մյուս դրույթը մարդու անձնիշխան լինելն է. աստված ստեղծել է մարդուն և ավել է նրան իշխանություն երկրի վրա. մարդը աշխարհի տերն է: Ըստ հայկական բնագրի՝ մարդն այնքան անձնիշխան է, որ նրա իրավունքը համասարվում է աստվածների իրավունքներին. «Ամենայն մարդ գնոյն աստուած կարծելով մարդ է և աստուած»:

Կարելի է բերել այլ օրինակներ ևս, բայց, կարծում ենք, բերված օրինակները բավական են համոզվելու համար, որ հայկական տեքստը իրոք պատկանում է հին եգիպտական այն գրականության խմբին, որը հայտնի էր որպես թոթական գրականություն և որը հետագայում վերցնելով հույները՝ վերագրեցին Հերմեսին և ստեղծեցին այսպես կոչված Հերմեսյան գրականությունը:

(Շարունակելի)